



**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ  
ՊԵՏԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N << ՀՀԱՆ-ՇՀԱՊԹԲ-15/3-17/2-1 >>**

**ք. Երևան**

**<<15 >> <<մայիսի>> 2017թ.**

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Արմեն Գևորգյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Տիգրան Ղարիբյանի, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և **գնման ժամանակացույցով** նախատեսված ժամկետներում **(հավելված N 2)** Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել **Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով** նախատեսված < **գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի**> /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

**2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **10(տաս)** օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **10(տաս)** օրից ավելի,

3.1.8 Ձևնել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

### **3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

### **3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը:

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

### **3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

#### 4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ **7314300 (յոթ միլիոն երեք հարյուր տասնչորս հազար երեք հարյուր) ՀՀ դրամ:**

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան **25.12.2017թ.** :

#### 5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

#### 6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (**Հավելված N 4**) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (**Հավելված N 4.1**):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի **0,05** (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի **0,5** (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի **0,05** (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք

ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի փնելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է [www.gnumner.am](http://www.gnumner.am) հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը,

պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:


9.11 Պայմանագիրը կազմված է **6(վեց)** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

#### 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները


ԳՆՈՐԴ

«Հարդարադատության նախարարության  
աշխատակազմ  
Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8  
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական  
վարչություն  
Հ/Հ 900011194157  
ՀՎՀՀ 02506264



ՎԱՃԱՌՈՂ

«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ  
Հասցե՝ ք.Երևան, Վարդանանց 110  
Հ/Հ՝ 16300-7031509  
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ»ԲԲԸ  
ՀՎՀՀ 01548908



**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

Չ/Հ	Գնման առարկայի անվանումը	Տեխնիկական բնութագիր	Քանակը
1	<b>հաշվասարք, 000-ով</b>	Հաշվասարք գրասենյակային, էլեկտրոնային, լուսային ճառագայթով ինքնալիցքավորվող, էկրանը՝ 12 նիշանի, հետադարձ ֆուկցիայի և <00>, <000> կոճակներով, օրիգինալ citizen ֆիրմայի արտադրության կամ համարժեքը:	<b>5</b>
2	<b>հաշվասարք, 00-ով</b>	Հաշվասարք գրասենյակային, էլեկտրոնային, լուսային ճառագայթով ինքնալիցքավորվող, էկրանը՝ 12 նիշանի, հետադարձ ֆուկցիայի և <00> կոճակներով, օրիգինալ citizen ֆիրմայի արտադրության կամ համարժեքը:	<b>5</b>
3	<b>ոետին հասարակ</b>	Ռետին հասարակ, գույնը՝ սպիտակ, փաթեթավորված թափանցիկ պոլիէթիլենային թաղանթով, չափսերը՝ 22x8x60մմ, օրիգինալ Maped ֆիրմայի արտադրության կամ համարժեքը:	<b>100</b>
4	<b>թանաքի բարձիկներ</b>	Թանաքի բարձիկ, բարձիկի չափսերը՝ 70x110մմ, բարձիկը՝ կապույտ գույնի, օրիգինալ gold horse ֆիրմայի արտադրության կամ համարժեքը:	<b>10</b>
5	<b>թանաք, կնիքի բարձիկի համար</b>	Թանաք՝ կնիքի բարձիկի համար, թանաքը՝ կապույտ գույնի, 30մլ, օրիգինալ fis ֆիրմայի արտադրության կամ համարժեքը:	<b>20</b>
6	<b>գրիչ գնդիկավոր մեծ</b>	Գրիչ գնդիկավոր, կապույտ գույնի, պլաստմասե, առանձին պլաստմասե կափարիչով, կափարիչի գրպանին ամրացնելու մասը՝ մետաղական նիկելապատ, ծայրը՝ 0.7մմ, բռնելու մասը՝ մուգ կապույտ ուռնիք, արտաքին գույնը՝ մուգ-կապույտ միատոն գույնի: Օրիգինալ Uniball ֆիրմայի արտադրության կամ համարժեքը:	<b>44</b>
7	<b>գրիչ գնդիկավոր միջին</b>	Գրիչ գնդիկավոր, կապույտ գույնի, ծայրը՝ 0.5մմ, առանձին թափանցիկ կափարիչով, բռնելու մասը՝ ուռնիքապատ, գրիչի հիմնական գույնը՝ սպիտակ, հետին ծայրը՝ մուգ կապույտ գույնի, առջևի ծայրը՝ մետաղական՝ նիկելապատ: Օրիգինալ Piano ֆիրմայի PT-555 մոդելի արտադրության կամ համարժեքը:	<b>825</b>
8	<b>գրիչ գնդիկավոր փոքր</b>	Գրիչ գնդիկավոր, կապույտ գույնի, ծայրը՝ 0.5մմ, առանձին թափանցիկ կափարիչով, բռնելու մասը՝ ուռնիքապատ, գրիչի հիմնական մասը թափանցիկ,	<b>2000</b>

		հետին ծայրը՝ մուգ կապույտ գույնի՝ պլաստմասե, առջևի ծայրը՝ մուգ կապույտ գույնի՝ պլաստմասե: Օրիգինալ Cello ֆիրմայի Finegrip մոդելի արտադրության կամ համարժեքը:	
9	<b>մարկերներ</b>	Մարկեր գունավոր(սև, կապույտ և կարմիր գույների), նախատեսված գրատախտակին գրելու համար, ջնջիչով մաքրվող Օրիգինալ Faber-Castell ֆիրմայի արտադրության կամ համարժեքը:	10
10	<b>գրիչ գելային մեծ</b>	Գրիչ գելային, սև գրող, առանձին կափարիչով, կափարիչի գրպանին ամրացնելու մասը՝ մետաղական նիկելապատ, ամբողջապես սև գույնի՝ պլաստմասե, 0.5մմ ծայրով: Օրիգինալ <Mitsubishi Pencil CO> LTD ֆիրմայի PIN 05-200 մոդելի արտադրության կամ համարժեքը:	44
11	<b>գրիչ գելային միջին</b>	Գրիչ գելային, կապույտ կամ սև գրող, առանձին կափարիչով՝ ամբողջապես պլաստմասե, կափարիչի գրպանին ամրացնելու մասը՝ մետաղական նիկելապատ, 0.7մմ ծայրով, Օրիգինալ <Mitsubishi Pencil CO> LTD ֆիրմայի UB-177 մոդելի արտադրության կամ համարժեքը:	240
12	<b>գրիչ գելային փոքր</b>	Գրիչ գելային, կապույտ գրող, ծայրը՝ 0.5մմ, առանձին թափանցիկ կափարիչով, գրիչի հիմնական մասը թափանցիկ, հետին ծայրը՝ մուգ կապույտ գույնի՝ պլաստմասե, առջևի ծայրը՝ առջևի ծայրը՝ մետաղական՝ նիկելապատ : Օրիգինալ ZHIXIN ֆիրմայի G-380 մոդելի արտադրության կամ համարժեքը:	1000
13	<b>մատիտներ</b>	Մատիտ՝ HB կոշտության գրաֆիտե միջուկով, փայտյա կամ փայտին փոխարինող նյութից պատրաստված, հետևի մասում՝ ռետին: Օրիգինալ Faber-Castell ֆիրմայի BONANZA մոդելի արտադրության կամ համարժեքը:	200
14	<b>սրիչներ</b>	Սրիչ՝ նախատեսված մատիտ սրելու համար, ամբողջությամբ մետաղյա:	300
15	<b>շտրիխներ</b>	Շտրիխ՝ սպիտակեցնող՝ գրասենյակային, գրչաձև գրող, սպիտակեցնող հեղուկը՝ առնվազն 12մլ: Օրիգինալ KOH-I-NOOR ապրանքանիշի արտադրության կամ համարժեքը:	300
16	<b>սկոչ մեծ</b>	Պոլիմերային ինքնակաշուն ժապավեն, չափսը՝ 48մմx100մ, թափանցիկ:	20
17	<b>Սկոչ փոքր</b>	Պոլիմերային ինքնակաշուն ժապավեն, չափսը՝ 19մմx36մ, թափանցիկ:	50
18	<b>սոսնձամատիտ, 25գ</b>	Սոսնձամատիտ գրասենյակային, պլաստմասե իրանով, սոսինձի զուտ քաշը՝ 25գ: Օրիգինալ Moment ապրանքանիշի արտադրության կամ համարժեքը:	50

19	<b>սոսնձամատիտ, 15գ</b>	Սոսնձամատիտ գրասենյակային, պլաստմասե իրանով, սոսինձի զուտ քաշը՝ <b>15գ</b> : Օրիգինալ Moment ապրանքանիշի արտադրության կամ համարժեքը:	<b>300</b>
20	<b>սոսնձամատիտ, 8</b>	Սոսնձամատիտ գրասենյակային, պլաստմասե իրանով, սոսինձի զուտ քաշը՝ <b>8գ</b> : Օրիգինալ Moment ապրանքանիշի արտադրության կամ համարժեքը:	<b>300</b>
21	<b>գծանշիչ</b>	Գծանշիչ մարկեր՝ ընդգծող, տարբեր գույների: Օրիգինալ Faber-Castell ֆիրմայի արտադրության կամ համարժեքը:	<b>300</b>
23	<b>Սեղանի կոմպլեկտ միջին</b>	Գրենական պիտույքների դասավորման կոմպլեկտ հավաքածու՝ սև գույնի, սեղանին դրվող: Հավաքածուն առնվազն ներառում է՝ գրենական պիտույքների դասավորման հարմարանք՝ գոգավոր սեկտորաձև, գրասենյակային դանակ, մկրատ, գրիչներ՝ 2 հատ, ռետին, կարիչ՝ ստեպլեր, կարիչի բացիչ, ամրակներ, մատիտի սրիչ, մատիտ՝ 2 հատ, պլաստամասե պոչով կոճգամներ, քանոն, նշումների թուղթ: Օրիգինալ PMP ֆիրմայի արտադրության կամ համարժեքը:	<b>80</b>
24	<b>Սեղանի կոմպլեկտ մեծ</b>	Գրենական պիտույքների դասավորման կոմպլեկտ հավաքածու՝ ամբողջությամբ բնական փայտից (գույնը՝ մուգ միատոն): Կոմպլեկտը առանձին-առանձին ներառում է՝ գրչաման, ժամացույց, ծրարներ բացելու համար դանակ, գրիչի պատվանդան՝ երկտեղանի, այցեքարտերի համար պատվանդան, նշումների թղթերի համար պատվանդան, դարակաշար՝ A4 չափի թղթերի համար՝ 2 հատ, կաշվից չեխոլ՝ փայտյա եզրերով:	<b>15</b>
26	<b>կարիչի ասեղ փոքր</b>	Կարիչի մետաղալարե կապեր, գրասենյակային, ասեղի չափսը՝ 10-1M, տուփով: Օրիգինալ Kangaro ֆիրմայի արտադրության կամ համարժեքը:	<b>100</b>
27	<b>կարիչի ասեղ միջին</b>	Կարիչի մետաղալարե կապեր, գրասենյակային, ասեղի չափսը՝ 24/6-1M, տուփով: Օրիգինալ Kangaro ֆիրմայի արտադրության կամ համարժեքը:	<b>200</b>
29	<b>թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ</b>	Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ, հաստությունը՝ առնվազն 50 միկրոն: A4 չափսի թղթերի համար:	<b>4000</b>
32	<b>թղթապանակ, կոշտ կազմով</b>	Թղթապանակ, կոշտ կազմով, ռեգիստրատոր, մետաղական կարիչով՝ առանձին մետաղական ֆիքսող հարմարանքով: Կարիչը՝ մեխանիկական մեխանիզմով: Հաստությունը՝ 75-80մմ, եզրանկյունները՝ մետաղական թիթեղապատ: Օրիգինալ YALONG ապրանքանիշի արտադրության կամ համարժեքը:	<b>600</b>
34	<b>կարիչ, միջին</b>	Կարիչ գրասենյակային, նախատեսված թղթերը միմյանց ամրացնելու համար, N 24/6-1M չափսի մետաղական	<b>120</b>


		ասեղներով կարող, մինչև 30 թերթ միաժամանակ կարելու համար: Օրիգինալ Kangaro ֆիրմայի HD-45 մոդելի արտադրության կամ համարժեքը:	
35	<b>կարիչ, մեծ</b>	Կարիչ՝ գրասենյակային, նախատեսված թղթերը միմյանց անրացնելու համար, մինչև 25մմ բարձրությամբ մետաղական ասեղներով կարող, մինչև 240 թերթ միաժամանակ կարելու համար: Օրիգինալ KANGARO ֆիրմայի արտադրության կամ համարժեքը:	<b>10</b>
36	<b>դակիչ, քանոնով</b>	Դակիչ՝ ծակոտիչ գրասենյակային, մինչև 35 թերթ միաժամանակ դակող: Օրիգինալ KANGARO կամ GINGKO ֆիրմայի արտադրության կամ համարժեքը:	<b>20</b>
37	<b>թուղթ, A4 Ֆորմատի1 /21x29.7/</b>	A4, չկավճած է էֆկալիպտե թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված: Խտությունը՝ 80 գ/մ <sup>2</sup> (առանց շեղումների): Չափերը՝ 21.0X29.7 մմ. (առանց շեղումների): Առանց փայտային խեժի և գազանման քլորիպարունակության Նախատեսված՝ միակողմանի և երկկողմանի տպագրության համար Պիտանի լազերային, թանաքաշիթային և օֆսեթ տպագրության համար Սպիտակությունը՝ ոչ պակաս 171%-ից (CIE համակարգով) (առանց շեղումների) ուլտրասպիտակ: Պայծառությունը՝ 105%: Հաստությունը՝ 108մկմ: Անթափանցելիությունը՝ 94%-ից ոչպակաս: Անհարթությունը (мероповатость) ոչավել՝ 180մկ/ր՝: Խոնավությունը՝ 3,5-4,5%: Արխիվային պահպանման ժամկետ՝ ոչպակասքան 150 տարի: Գործարանային փաթեթավորմամբ: Յուրաքանչյուր տուփում թերթերի քանակը՝ 500 հատ (առանց շեղումների): Մեկտուփի քաշը՝ 2,5 կգ: ISO 14001, ISO 9706, ISO 17025, ISO 11475, OHSAS 18001, NordicPine, GreenStarSystem, FSC, PEFC, ECF ստանդարտներին համապատասխան (անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել համապատասխանությունը հավաստող սերտիֆիկատներ): Տոքսիկայնություն՝ ոչ ավել քան 95,3%: Ֆենոլի պարունակություն՝ ոչ ավել քան 0,001 մգ/մ <sup>3</sup> : Ֆորմալդեհիդի պարունակություն՝ ոչ ավել քան 0,0014 մգ/մ <sup>3</sup> :	<b>2690</b>
38	<b>ծրար</b>	Ծրար՝ ամբողջությամբ թղթյա, թղթի խտությունը՝ առնվազն 120 գ/մ <sup>2</sup> , ինքնասոսնձվող փակվող, միատոն սպիտակ գույնի, չափսը՝ 225x115մմ , փաթեթավորված՝ 50-ական՝ թափանցիկ պոլիէթիլենային թաղանթով:	<b>7000</b>

40	<b>Ծրար մեծ</b>	Ծրար՝ ամբողջությամբ թղթյա, թղթի խտությունը՝ առնվազն 120 գ/մ <sup>2</sup> , հնքնաստանձվող փակվող, միատոն սպիտակ գույնի, չափսը՝ 229x324մմ, փաթեթավորված՝ 50-ական՝ թափանցիկ պոլիէթիլենային թաղանթով:	<b>2000</b>
41	<b>կաշուն թուղթ 7.6x5.1</b>	Թուղթ հնքնաստանձվող եզրով, 100-ական շերտով, բաց-դեղին միատոն գույնի: Չափսը՝ 7.6x5.1սմ: Փաթեթավորված թափանցիկ պոլիէթիլենային թաղանթով: Օրիգինալ Dolphin ֆիրմայի արտադրության կամ համարժեքը:	<b>180</b>
42	<b>կաշուն թուղթ 7.6x7.6</b>	Թուղթ հնքնաստանձվող եզրով, 100-ական շերտով, բաց-դեղին միատոն գույնի: Չափսը՝ 7.6x7.6սմ: Փաթեթավորված թափանցիկ պոլիէթիլենային թաղանթով: Օրիգինալ Dolphin ֆիրմայի արտադրության կամ համարժեքը:	<b>180</b>
43	<b>կաշուն թուղթ 7.6x10.2</b>	Թուղթ հնքնաստանձվող եզրով, 100-ական շերտով, բաց-դեղին միատոն գույնի: Չափսը՝ 7.6x10.2սմ: Փաթեթավորված թափանցիկ պոլիէթիլենային թաղանթով: Օրիգինալ Dolphin ֆիրմայի արտադրության կամ համարժեքը:	<b>300</b>
44	<b>կաշուն թուղթ 7.6x12.3</b>	Թուղթ հնքնաստանձվող եզրով, 100-ական շերտով, բաց-դեղին միատոն գույնի: Չափսը՝ 7.6x12.3սմ: Փաթեթավորված թափանցիկ պոլիէթիլենային թաղանթով: Օրիգինալ Dolphin ֆիրմայի արտադրության կամ համարժեքը:	<b>120</b>
45	<b>ստանձապատված կամ կաշուն թուղթ</b>	Թուղթ նշումների համար, տրցակով՝ 300 թերթ տրցակում, թղթի խտությունը՝ 80 գ/մ <sup>2</sup> , թղթերի սպիտակությունը՝ ոչ պակաս 140%-ից (CIE՝՝ համակարգով), տրցակը՝ մի եզրից ստանձապատված, չափսերը՝ 65x100մմ:	<b>60</b>
46	<b>հնքնակաշուն թուղթ, A4</b>	Ինքնակաշուն թուղթ A4 չափսի, յուրաքանչյուր թուղթը բաժանված 65 մասի, սպիտակ գույնի, փաթեթավորված ստավարաթղթե տուփերով՝ 100-ական: Օրիգինալ Formtec ֆիրմայի արտադրության կամ համարժեքը:	<b>2</b>
47	<b>դատարկ CD</b>	Դատարկ սկավառակ, առանց տուփի, CD՝ պոլիէթիլենային պաշտպանիչ ֆայլով, Օրիգինալ Verbatim ֆիրմայի արտադրության կամ համարժեքը:	<b>100</b>
48	<b>դատարկ DVD</b>	Դատարկ սկավառակ, առանց տուփի, DVD՝ պոլիէթիլենային պաշտպանիչ ֆայլով: Օրիգինալ Verbatim ֆիրմայի արտադրության կամ համարժեքը:	<b>100</b>
49	<b>Ֆլեշ հիշողություն, 32GB</b>	Ֆլեշ հիշողություն 32GB տարողությամբ, USB-2: Օրիգինալ Verbatim ֆիրմայի արտադրության կամ համարժեքը:	<b>50</b>
53	<b>մկրատ,</b>	Մկրատ, գրասենյակային, կտրող մասը՝ առնվազն 70մմ	<b>100</b>

	<b>գրասենյակային</b>	երկարությամբ՝ մետաղական, պլաստմասե բռնակով: Օրիգինալ Maped ֆիրմայի արտադրության կամ համարժեքը:	
54	<b>թուղթ կտրող սարք</b>	Թուղթ կտրող սարք մետաղական, մեխանիկական, դանակի կտրող մասի երկարությունը՝ առնվազն 480մմ, թղթի կտրման չափսը ֆիքսող քանոնով: սեղանին դրվող, չափսերը՝ 380x480մմ: Օրիգինալ Cosmic ֆիրմայի արտադրության կամ համարժեքը:	<b>5</b>
55	<b>ամրակ, փոքր</b>	Ամրակ, մետաղյա, փոքր, փաթեթավորված սովարաթղթե տուփում: Տուփում 100 հատ՝ 33մմ չափսի:	<b>300</b>
56	<b>ամրակ, մեծ</b>	Ամրակ, մետաղյա, մեծ, փաթեթավորված սովարաթղթե տուփում: Տուփում 100 հատ՝ 50մմ չափսի:	<b>80</b>
57	<b>սեղմակ, փոքր</b>	Սեղմակ փոքր չափսի, գրասենյակային, մետաղական, սև գույնի: Չափսը՝ 32մմ լայնությամբ:	<b>600</b>
58	<b>սեղմակ, միջին</b>	Սեղմակ միջին չափսի, գրասենյակային, մետաղական, սև գույնի: Չափսը՝ 40մմ լայնությամբ:	<b>600</b>
59	<b>սեղմակ, մեծ</b>	Սեղմակ մեծ չափսի, գրասենյակային, մետաղական, սև գույնի: Չափսը՝ 50մմ լայնությամբ:	<b>180</b>
60	<b>քանոն</b>	Քանոն թափանցիկ պլաստմասե, մեջտեղի մասում՝ բռնակով, 30սմ երկարությամբ:	<b>350</b>


**ԳՆՈՐԴ**

«Արդարադատության նախարարության  
աշխատակազմ  
Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8  
«Արդարադատության գործառնական  
վարչություն  
Հ/Հ 900011194157  
ՀՎՀՀ 02506264



**ՎԱՃԱՌՈՂ**

«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ  
Հասցե՝ ք.Երևան, Վարդանանց 110  
Հ/Հ՝ 16300-7031509  
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ  
ՀՎՀՀ 01548908



**ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

<< դրամ

Ձ/Հ	Ապրանքի			Նախատեսվում է գնել 2017 թվականի ընթացքում, ընդ որում								Ընդամենը	
	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը /<< դրամ/	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	հաշվասարք, 000-ով	հատ	9900 ✓	-		5	49500	0	0	-		5	49500
2	հաշվասարք, 00-ով	հատ	4450 ✓	-		5	22250	0	0	-		5	22250
3	ռետին հասարակ	հատ	150 ✓	-		30	4500	70	10500	-		100	15000
4	թանաքի բարձիկներ	հատ	250 ✓	-		10	2500	0	0	-		10	2500
5	թանաք, կնիքի բարձիկի համար	հատ	240 ✓	-		20	4800	0	0	-		20	4800
6	գրիչ գնդիկավոր մեծ	հատ	620 ✓	-		14	8680	30	18600	-		44	27280
7	գրիչ գնդիկավոր միջին	հատ	90 ✓	-		300	27000	525	47250	-		825	74250
8	գրիչ գնդիկավոր փոքր	հատ	50 ✓	-		700	35000	1300	65000	-		2000	100000

9	մարկերներ ✓	հատ	150	-	10	1500	0	0	-	10	1500
10	գրիչ գելային մեծ ✓	հատ	780	-	14	10920	30	23400	-	44	34320
11	գրիչ գելային միջին ✓	հատ	340	-	84	28560	156	53040	-	240	81600
12	գրիչ գելային փոքր ✓	հատ	90	-	300	27000	700	63000	-	1000	90000
13	մատիտներ ✓	հատ	45	-	70	3150	130	5850	-	200	9000
14	սրիչներ ✓	հատ	150	-	100	15000	200	30000	-	300	45000
15	շտրիխներ ✓	հատ	155	-	100	15500	200	31000	-	300	46500
16	սկոչ մեծ ✓	հատ	480	-	20	9600	0	0	-	20	9600
17	Սկոչ փոքր ✓	հատ	120	-	50	6000	0	0	-	50	6000
18	սոսնձամատիտ, 25գ ✓	հատ	410	-	50	20500	0	0	-	50	20500
19	սոսնձամատիտ, 15գ ✓	հատ	250	-	100	25000	200	50000	-	300	75000
20	սոսնձամատիտ, 8 ✓	հատ	170	-	100	17000	200	34000	-	300	51000

21	գծանշիչ ✓	հատ	145	-	100	14500	200	29000	-	300	43500
23	Սեղանի կոմպլեկտ միջին ✓	հատ	1650	-	80	132000	0	0	-	80	132000
24	Սեղանի կոմպլեկտ մեծ ✓	հատ	31500	-	15	472500	0	0	-	15	472500
26	կարիչի ասեղ փոքր ✓	տուփ	60	-	30	1800	70	4200	-	100	6000
27	կարիչի ասեղ միջին ✓	տուփ	97.5	-	70	6825	130	12675	-	200	19500
29	թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ ✓	հատ	8.5	-	2000	17000	2000	17000	-	4000	34000
32	թղթապանակ, կոշտ կազմով ✓	հատ	535	-	200	107000	400	214000	-	600	321000
34	կարիչ, միջին ✓	հատ	950	-	40	38000	80	76000	-	120	114000
35	կարիչ, մեծ ✓	հատ	11500	-	5	57500	5	57500	-	10	115000
36	դակիչ, քանոնով ✓	հատ	1350	-	10	13500	10	13500	-	20	27000
37	թուղթ, A4 ֆորմատի1 /21x29.7/ ✓	տուփ	1670	-	690	1152300	2000	3340000	-	2690	4492300
38	ծրար ✓	հատ	8.2	-	2000	16400	5000	41000	-	7000	57400


40	Ծրար մեծ ✓	հատ	30	-	1000	30000	1000	30000	-	2000	60000
41	կաշուն թուղթ 7.6x5.1 ✓	հատ	100	-	60	6000	120	12000	-	180	18000
42	կաշուն թուղթ 7.6x7.6 ✓	հատ	120	-	60	7200	120	14400	-	180	21600
43	կաշուն թուղթ 7.6x10.2 ✓	հատ	170	-	100	17000	200	34000	-	300	51000
44	կաշուն թուղթ 7.6x12.3 ✓	հատ	210	-	40	8400	80	16800	-	120	25200
45	սոսնձապատված կամ կաշուն թուղթ ✓	հատ	300	-	20	6000	40	12000	-	60	18000
46	ինքնակաշուն թուղթ, A4 ✓	տուփ	6500	-	2	13000	0	0	-	2	13000
47	դատարկ CD ✓	հատ	95	-	100	9500	0	0	-	100	9500
48	դատարկ DVD ✓	հատ	145	-	100	14500	0	0	-	100	14500
49	Ֆլեշ հիշողություն, 32GB ✓	հատ	3500	-	20	70000	30	105000	-	50	175000
53	մկրատ, գրասենյակային ✓	հատ	220	-	30	6600	70	15400	-	100	22000
54	թուղթ կտրուղ սաքք ✓	հատ	24500	-	5	122500	0	0	-	5	122500

55	ամրակ, փոքր V	տուփ	80	-	100	8000	200	16000	-	300	24000
56	ամրակ, մեծ	տուփ	250	-	30	7500	50	12500	-	80	20000
57	սեղմակ, փոքր	հատ	22	-	200	4400	400	8800	-	600	13200
58	սեղմակ, միջին	հատ	35	-	200	7000	400	14000	-	600	21000
59	սեղմակ, մեծ	հատ	50	-	60	3000	120	6000	-	180	9000
60	քանոն	հատ	220	-	100	22000	250	55000	-	350	77000
Ընդամենը				X	X	X	X	X	X		7314300 (յոթ միլիոն երեք հարյուր տասնչորս հազար երեք հարյուր)


ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

ՀՀ արդարադատության նախարարության  
աշխատակազմ  
Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8  
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական  
վարչություն  
Հ/Հ 900011194157  
ՀՎՀՀ 02506264



«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ  
Հասցե՝ ք.Երևան, Վարդանանց 110  
Հ/Հ՝ 16300-7031509  
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ»ԲԲԸ  
ՀՎՀՀ 01548908



**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\***

Ձ/Կ	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2017թ. պետական բյուջեով համապատասխան ֆինանսական միջոցների չափով և համամասնությամբ՝ ըստ ամիսների՝ ընդ որում											Ընդամենը Տարի		
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր		դեկտեմբեր	
1	հաշվասարք, 000-ով	.	.	.	.	2970	2970	29700	29700	29700	29700	49500	49500	49500	49500
2	հաշվասարք, 00-ով	.	.	.	.	1335	1335	13350	13350	13350	13350	22250	22250	22250	22250
3	ռետին հասարակ	.	.	.	.	900	900	9000	9000	9000	9000	15000	15000	15000	15000
4	թանաքի բարձիկներ	.	.	.	.	150	150	1500	1500	1500	1500	2500	2500	2500	2500
5	թանաք, կնիքի բարձիկի համար	.	.	.	.	288	288	2880	2880	2880	2880	4800	4800	4800	4800
6	գրիչ գնդիկավոր մեծ	.	.	.	.	1640	1640	16368	16368	16368	16368	27280	27280	27280	27280
7	գրիչ գնդիկավոր միջին	.	.	.	.	4455	4455	44550	44550	44550	44550	74250	74250	74250	74250
8	գրիչ գնդիկավոր փոքր	.	.	.	.	6000	6000	60000	60000	60000	60000	100000	100000	100000	100000

9	մարկերներ	.	.	.	.	90	90	900	900	900	900	1500	1500	1500	1500
10	գրիչ գելային մեծ	.	.	.	.	2060	2060	20592	20592	20592	20592	34320	34320	34320	34320
11	գրիչ գելային միջին	.	.	.	.	4896	4896	48960	48960	48960	48960	81600	81600	81600	81600
12	գրիչ գելային փոքր	.	.	.	.	5400	5400	54000	54000	54000	54000	90000	90000	90000	90000
13	մատիտներ	.	.	.	.	540	540	5400	5400	5400	5400	9000	9000	9000	9000
14	սրիչներ	.	.	.	.	2700	2700	27000	27000	27000	27000	45000	45000	45000	45000
15	շտրիխներ	.	.	.	.	2790	2790	27900	27900	27900	27900	46500	46500	46500	46500
16	սկոչ մեծ	.	.	.	.	576	576	5760	5760	5760	5760	9600	9600	9600	9600
17	Սկոչ փոքր	.	.	.	.	360	360	3600	3600	3600	3600	6000	6000	6000	6000
18	սոսնձամատիտ, 25գ	.	.	.	.	1230	1230	12300	12300	12300	12300	20500	20500	20500	20500
19	սոսնձամատիտ, 15գ	.	.	.	.	4500	4500	45000	45000	45000	45000	75000	75000	75000	75000
20	սոսնձամատիտ, 8	.	.	.	.	3060	3060	30600	30600	30600	30600	51000	51000	51000	51000

21	գծանշիչ	.	.	.	.	2610	2610	26100	26100	26100	43500	43500	43500
23	Սեղանի կոմպլեկտ միջին	.	.	.	.	7920	7920	79200	79200	79200	132000	132000	132000
24	Սեղանի կոմպլեկտ մեծ	.	.	.	.	28350	28350	283500	283500	283500	472500	472500	472500
26	կարիչի ասեղ փոքր	.	.	.	.	360	360	3600	3600	3600	6000	6000	6000
27	կարիչի ասեղ միջին	.	.	.	.	1170	1170	11700	11700	11700	19500	19500	19500
29	թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	.	.	.	.	2040	2040	20400	20400	20400	34000	34000	34000
32	թղթապանակ, կոշտ կազմով	.	.	.	.	19260	19260	192600	192600	192600	321000	321000	321000
34	կարիչ, միջին	.	.	.	.	6840	6840	68400	68400	68400	114000	114000	114000
35	կարիչ, մեծ	.	.	.	.	6900	6900	69000	69000	69000	115000	115000	115000
36	դակիչ, քանոնով	.	.	.	.	1620	1620	16200	16200	16200	27000	27000	27000
37	թուղթ, A4 ֆորմատի /21x29.7/	.	.	.	.	269538	269538	2695380	2695380	2695380	4492300	4492300	4492300
38	ծրար	.	.	.	.	3444	3444	34440	34440	34440	57400	57400	57400

40	Ծրար մեծ	.	.	.	.	.	3600	3600	36000	36000	36000	36000	60000	60000	60000	60000	60000	
41	կաշուն թուղթ 7.6x5.1	.	.	.	.	.	1080	1080	10800	10800	10800	10800	18000	18000	18000	18000	18000	
42	կաշուն թուղթ 7.6x7.6	.	.	.	.	.	1296	1296	12960	12960	12960	12960	21600	21600	21600	21600	21600	
43	կաշուն թուղթ 7.6x10.2	.	.	.	.	.	3060	3060	30600	30600	30600	30600	51000	51000	51000	51000	51000	
44	կաշուն թուղթ 7.6x12.3	.	.	.	.	.	1512	1512	15120	15120	15120	15120	25200	25200	25200	25200	25200	
45	սոսնձապատված կամ կաշուն թուղթ	.	.	.	.	.	1080	1080	10800	10800	10800	10800	18000	18000	18000	18000	18000	
46	ինքնակաշուն թուղթ, A4	.	.	.	.	.	780	780	7800	7800	7800	7800	13000	13000	13000	13000	13000	
47	դատարկ CD	.	.	.	.	.	570	570	5700	5700	5700	5700	9500	9500	9500	9500	9500	
48	դատարկ DVD	.	.	.	.	.	870	870	8700	8700	8700	8700	14500	14500	14500	14500	14500	
49	Ֆլեշ հիշողություն, 32GB	.	.	.	.	.	10500	10500	105000	105000	105000	105000	175000	175000	175000	175000	175000	
53	մկրատ, գրասենյակային	.	.	.	.	.	1320	1320	13200	13200	13200	13200	22000	22000	22000	22000	22000	22000
54	թուղթ կտրված սառն	.	.	.	.	.	7350	7350	73500	73500	73500	73500	122500	122500	122500	122500	122500	122500

55	ամրակ, փոքր	.	.	.	.	1440	1440	14400	14400	14400	24000	24000	24000	24000
56	ամրակ, մեծ	.	.	.	.	1200	1200	12000	12000	12000	20000	20000	20000	20000
57	սեղմակ, փոքր	.	.	.	.	792	792	7920	7920	7920	13200	13200	13200	13200
58	սեղմակ, միջին	.	.	.	.	1260	1260	12600	12600	12600	21000	21000	21000	21000
59	սեղմակ, մեծ	.	.	.	.	540	540	5400	5400	5400	9000	9000	9000	9000
60	քանոն	.	.	.	.	4620	4620	46200	46200	46200	77000	77000	77000	77000
						438862	438862	4388580	4388580	4388580	7314300	7314300	7314300	7314300 (յոթ միլիոն երեք հարյուր տասնչորս հազար երեք հարյուր)

\* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով՝ ՀՀ դրամով:

ԳՆՈՐԴ

ՀՀ արդարադատության նախարարության  
աշխատակազմ  
Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8  
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական  
վարչություն  
Հ/Հ 900011194157  
ՀՎՀՀ 02500264



ՎԱՃԱՍՈՂ

«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ  
Հասցե՝ ք.Երևան, Վարդանանց 110  
Հ/Հ՝ 16300-7031509  
Բանկ՝ «Հայէկոնտրանկ»ԲԲԸ  
ՀՎՀՀ 01548908



Պայմանագրի կողմ  
\_\_\_\_\_  
գտնվելու վայրը \_\_\_\_\_  
հհ \_\_\_\_\_  
հվհհ \_\_\_\_\_

Պատվիրատու  
\_\_\_\_\_  
գտնվելու վայրը \_\_\_\_\_  
հհ \_\_\_\_\_  
հվհհ \_\_\_\_\_

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N  
ՀԱՆՁՆԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«    » «    » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «    » «    » 20 թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_

Պատվիրատուն՝ ի դեմս \_\_\_\_\_ և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս \_\_\_\_\_, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «    » 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

Մատակարարված ապրանքների								
N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

\_\_\_\_\_  
ստորագրություն  
\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

\_\_\_\_\_  
ստորագրություն  
\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
Կ.Տ.

**ԱԿՏ N**  
**պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ \_\_\_\_\_-ի (այսուհետ՝ Գնորդ) և  
 \_\_\_\_\_-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. \_\_\_\_\_-ին կնքված N \_\_\_\_\_  
 (Գնորդի անունը) \_\_\_\_\_-ին հանձնման-ընդունման  
 (Վաճառողի անունը) \_\_\_\_\_-ին հանձնման-ընդունման  
 գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. \_\_\_\_\_-ին հանձնման-ընդունման  
 նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

\_\_\_\_\_  
 ազգանուն, անուն  
 \_\_\_\_\_  
 ստորագրություն

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝  
 \_\_\_\_\_  
 ազգանուն, անուն  
 \_\_\_\_\_  
 ստորագրություն

ք. Երևան

<< 15 >> մայիսի 2017թ.

«ՄՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն **Տիգրան Ղարիբյանի**, (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

**1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի (այսուհետև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ «**գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի**» >>\* ձեռքբերման «**ՀՀԱՆ-ՇՀԱՊՁԲ-15/3-17/2**»\* ծածկագրով ՇՀ\*\* գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ «**վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների**»>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետև՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետև՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է «**ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ**» ՓԲԸ (Վարկային բյուրո):

**2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքված պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

**3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝**

Ընկերության անվանումը՝ «ՄՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ  
Հասցեն՝ ք.Երևան, Վարդանանց 110  
Սպասարկող բանկի անվանումը՝ «ՍՊԿ ԲԱՆԿ» ՊՈՒԿ  
Հ/Կ 16300-7039500  
Հ/ԿԿ 0548908

տնօրեն՝

գլխ. հաշվապահ՝

Կ.Տ



1.	ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ՝ N ՀՀԱՆ-ՇՀԱՊՁԲ-15/3-17/2-1 (պայմանագրի կատարման ապահովում)	
2.	Ներկայացման ամսաթիվը՝ "___" _____ 2017թ.	
3.	Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ	
4.	Վճարողի բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ	
5.	Վճարողի հաշվի համարը՝ 16300-7031509	
6.	Վճարողի ՀՎՀՀ՝ 01548908	
7.	Վճարողի ՀՕՀ՝	
8.	Շահառու՝ ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմ	
9.	Շահառուի ՀՎՀՀ՝ 02506264	
10.	Շահառուի բանկը՝ Կենտրոնական գանձապետարան	
11.	Շահառուի հաշվի համարը /հշ. N/ 900005000758	
12.	Գումարը թվերով և բառերով՝ 731430 (յոթ հարյուր երեսունմեկ հազար չորս հարյուր երեսուն)	
13.	Արժույթը (բառերով և կողով)՝ ՀՀ դրամ	
14.	Գործարքի /վճարման/ նպատակը՝ թիվ ՀՀԱՆ-ՇՀԱՊՁԲ-15/3-17/2-1 պայմանագրի ապահովում՝	
15.	Պայմանագրի ծածկագիրը՝ ՀՀԱՆ-ՇՀԱՊՁԲ-15/3-17/2-1	
16.	Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը	
17.	17. կից՝---	
19.ա.	Շահառուի ստորագրությունները	18.ա. Վճարողի ստորագրությունները՝
19.բ.		
19.բ.	Կատարված է շահառուի բանկի կողմից	18.բ. Կատարված է վճարողի բանկի կողմից
20.ա.	/_____/ /ստորագրություն/	21.ա. /_____/ /ստորագրություն/
20.բ.	Կ.Տ. "___" ___ 20___ թ.	21.բ. Կ.Տ. "___" ___ 20___ թ.

<sup>1</sup> Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»: